

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/5

12 մայիսի 2015 թ.

Քննարկվեց «Արայ» ՍՊԸ 27.04.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ գործողությունների դեմ:

#### **«Արայ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.**

1. 20.11.2013թ. կազմվել է ստուգման թիվ 1000174 ակտը (այսուհետ՝ Ակտ), որով «Արայ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև Ընկերություն) առաջադրվել են լրացուցիչ հարկային պարտավորություններ շահութահարկի, եկամտահարկի, ավելացված արժեքի հարկի և գործատուի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասով, ընդհանուր առմամբ 1,265,226,256 ՀՀ դրամի չափով:

2. 05.12.2013թ. Ընկերությունը վիճարկման հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան:

3. 12.12.2013թ. ՀՀ վարչական դատարանի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ:

4. 07.04.2014թ. ՀՀ վարչական դատարանը Ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության՝ «ՀՀ ԿԱ ՊԵԿ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 20.11.2013թ. ստուգման թիվ 1000174 ակտը 1-ին /շահութահարկի մասով/, 3-րդ /հարկային գործակալի կողմից պահվող եկամտահարկի/, 5-րդ /ԱԱՀ-ի մասով/ և 15-րդ /գործատուի պարտադիր սոցիալական ապահովության վճարների/ մասով անվավեր ճանաչելու» պահանջի մասին, վարչական գործի վարույթը կասեցրել է մինչև թիվ 69111012 քրեական գործով դատահաշվապահական փորձաքննության ավարտը:

5. Ընկերությունը 02.04.2015թ. դիմում է ներկայացրել ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն՝ խնդրելով հայտնել, թե ուղղվել են արդյոք Ակտի ընդունման օրվանից մինչև դիմում ներկայացնելու օրը Ընկերության կողմից կատարված վճարումների (ներառյալ՝ գերավճարների, դեբիտորական մնացորդների) գումարները Ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանը, թե ոչ:

6. ՀՀ Ֆինանսների նախարարության խոշոր հարկ վճարողների հարկային տեսչությունը 11.04.2015թ. գրությամբ պատասխանելով Ընկերության 02.04.2015թ. գրությանը հայտնել է, որ Ընկերության կողմից կատարված ոչ նպատակային վճարումներից, գերավճարներից և դեբիտորական մնացորդներից առաջացած գումարները ուղղվել են Ակտով առաջացած լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանը:

Ընկերությունը գտնում է, որ Ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանն ուղղելու հարկային մարմնի գործողությունները ոչ իրավաչափ են, հետևյալ պատճառաբանությամբ՝

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն, ըստ էության, լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը.....:

Ընկերությունը 05.12.2013թ. վիճարկման հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը 12.12.2013թ. որոշմամբ ընդունվել է վարույթ:

07.04.2014թ. ՀՀ վարչական դատարանը Ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումի վերաբերյալ վարչական գործի վարույթը կասեցրել է մինչև թիվ 69111012 քրեական գործով դատահաշվապահական փորձաքննության ավարտը:

Վարչական դատավարության կարգով քննվող գործով սույն վարչական բողոք ներկայացնելու պահին դեռևս գործն, ըստ էության, լուծող ակտ չի ընդունվել:

Վերը նշված փաստերից հետևում է, որ Ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարումը չէր կարող Ընկերության կողմից կատարված փոխանցման, դեբիտորական մնացորդների կամ գերավճարների հաշվին կատարվել: Սակայն հարկային մարմինը Ընկերության հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի կողմից 12.12.2013թ. վարույթ ընդունելուց հետո Ակտի կատարումը չի կասեցրել:

Վարչական մարմինը անտեսել է այն հանգամանքը, որ Ակտի վիճարկման փաստը արդեն իսկ նշանակում է, որ այն չի կարող դրվել որևէ այլ վարչական ակտի կամ գործողության հիմքում: Տվյալ դեպքում հարկային տեսչությունը իրավասու չէր Ընկերության կողմից կատարված ոչ նպատակային վճարումները, գերավճարները և դեբիտորական մնացորդներից առաջացած գումարները ուղղել Ակտով նախատեսված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից, որի համաձայն վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Վերը նշված փաստերի և իրավական հիմնավորումների հաշվառմամբ պետք է արձանագրել, որ Ակտի հիման վրա, հաշվի առնելով դրա դատական կարգով վիճարկելու փաստը, չի կարող իրականացվել վարչարարություն: Մինչդեռ 11.04.2015թ. գրությունից պարզ է դառնում, որ հարկային մարմինն Ակտով առաջադրված պարտավորությունների մարմանն է ուղղել գերավճարից 11,937,410 ՀՀ դրամ, դեբետից՝ 23,157,410 ՀՀ դրամ և վճարումներից՝ 358,688,641 ՀՀ դրամ գումար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 10-րդ գլխով ընկերությունը խնդրում է Ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների գումարների գանձման (մարման) գործողությունները ճանաչել ոչ իրավաչափ և պարտավորեցնել հարկային տեսչությանը ձեռնպահ մնալ Ակտով առաջադրված պարտավորությունների գանձմանն ուղղված գործողություններ կատարելուց:

### **ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 18.05.2011 թ-ի թիվ 1000174 հանձնարարագրի համաձայն «Արայ» ՍՊԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Խոշոր հարկ վճարողների ՀՏ 20.11.2013 թ-ի թիվ 1000174 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 1.265.836.973 դրամ:

05.12.2013 թ-ին Ընկերությունը Ակտի վիճարկման հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան, որը ՀՀ վարչական դատարանի 12.12.2013 թ-ի որոշմամբ ընդունվել է վարույթ:

ՀՀ վարչական դատարանի 07.04.2014 թ-ի որոշման համաձայն վերոգրյալ վարչական գործի վարույթը կասեցվել է, մինչև թիվ 69111012 քրեական գործով դատահաշվապահական փորձաքննության ավարտը:

Ընկերությունը 02.04.2015 թ-ին դիմում է ներկայացրել ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն, որով խնդրել է հայտնել, թե ուղղվել են արդյոք Ակտի ընդունման օրվանից մինչև դիմում ներկայացնելու օրը Ընկերության կողմից կատարված վճարումների (ներառյալ՝ գերավճարների, դեբիտորական մնացորդների) գումարները Ակտով առաջադրված լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանը, թե ոչ:

ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ-ի 11.04.2015 թ-ի պատասխան գրությամբ հայտնվել է, որ Ընկերության կողմից կատարված ոչ նպատակային վճարումներից, գերավճարներից և դեբիտորական մնացորդներից առաջացած գումարները ուղղվել են Ակտով առաջացած լրացուցիչ հարկային պարտավորությունների մարմանը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալ իրավանորմի դրույթներից հետևում է, որ ընկերության կողմից Ակտը դատական կարգով վիճարկվելու պայմաններում ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ-ին անհրաժեշտ էր ձեռնպահ մնալ ակտի կատարմանը ուղղված գործողություններից, մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ այն գումարները, որոնք ընկերության կողմից Ակտի դեմ ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ խոշոր հարկ վճարողների ՀՏ կողմից ուղղվել են Ակտով առաջադրված պարտավորությունների մարմանը, ենթակա են վերահաշվարկման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

«Արայ» ՍՊԸ 27.04.2015 թ-ի վարչական բողոքը բավարարել:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

